

«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2025-2026
Առարկա (5-րդ դասարան)



Անուն Հայրանուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____



Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

Եղիշե Չարենց

Սիրելի՛ բարեկամ, կարգա՛ այս գրվածքը, որի հեղինակը Վիլյամ Սարոյանն է:

ԱՅՈՒ

Վաղուց, շա՛տ վաղուց հինավուրց աշխարհում միայն մի բառ կար՝ ԱՅՈՒ:

Դա միակ բառն էր աշխարհում: Մարդիկնց մի մասն ուղղակի գոռում էր այդ բառը, մյուսները շուրջով էին ասում, մի ֆանիսը՝ լալով, ոմանք՝ ծիծաղելով: Չէ՞ որ դա միակ բառն էր: Երբ բոլոր մարդիկ միասին էին ասում այդ բառը, ստացվում էր՝ ԱՅՈՒ-ԱՅՈՒ-ԱՅՈՒ ...

Մի օր էլ մարդիկնց գլուխն սկսեց ցավել անընդհատ ԱՅՈՒ-ԱՅՈՒ ասելուց ու լսելուց: Գլխացավից ու ձանձրությանց ազատվելու համար նրանք շատ էին ուզում նոր բառ հնարել:

Վերջապես մի մարդ, որի գլուխն ամենից շատ էր ցավում, կեսգիշերին արթնանացավ և ինչքան ուժ ուներ, գոռաց՝ Ո՛Ջ:

Սկզբում թվում էր, թե նոր բառը կոպիտ է և տհաճ, շատերը չէին էլ ուզում լսել: Բայց հետո կամաց-կամաց դադարում էին միայն ԱՅՈՒ-ԱՅՈՒ ասելուց...

Ու շուտով բոլորն էլ գիտեին ՈՋ բառը: Նույնիսկ հաճույքով էին կրկնում: Այժմ աշխարհում ասելու և լսելու համար արդեն երկու բառ կար: Է՛հ, եթե կա երկու բառ, ինչո՞ւ չլինի երրորդը: Ու եթե կա երեք բառ, ինչո՞ւ չլինի չորրորդը: Իսկ եթե կա չորս բառ, ապա ի՞նչն է խնդարում, որ լինեն շատ ու շատ նոր բառեր:



Այսպես մարդիկ սկսեցին իրար հետ խոսել, հարցեր տալ ու պատասխանել: Ու մտածել, թե ի՞նչ բան է աշխարհը: Եվ մինչև հիմա էլ փնտրում են...

Կատարի՛ր առաջադրանքները

1. Դու ի՞նչ բառեր գիտես, որոնք կարող են կիրառել այս կամ ոչ բառերի փոխարեն: Երացրո՛ւ աղյուսակը **(10 միավոր)**:

ԱՅՈՒ Հաստատում	ՈՉ ժխտում

2. Տե՛ստի ո՞ր բառերը կփոխարինես տրվածներով՝ վաղնջական, աստիճանաբար, տաղտուկ, բղավել, խորհել: Բառերը գրի՛ր կողք կողքի և նույն տողում **(5 միավոր)**:

3. Տե՛ստի ո՞ր բառերի հակառակ իմաստն են արտահայտում տրվածները՝ մրմնջալ, քրքջալ, տհաճություն, նուրբ, արագորեն: Բառերը գրի՛ր կողք կողքի և նույն տողում **(5 միավոր)**:

4. Գրի՛ր տասը այնպիսի բառ, որ իր կազմում ունենա չորս թվականը կամ դրա իմաստն արտահայտող արմատը **(10 միավոր):**

5. Տեխտի ո՞ր բառը կգրես տրված արմատների կողքին: Վերիիցի՛ր և գրի՛ր **5**-ական բառ, որոնց կազմում կան տրված արմատները **(10 միավոր):**

Տեխտից ընտրած

բառը-----

կար-----

կուտ-----

6. Ի՞նչ ես կարծում, արդյո՞ք բառերը կարևո՞ր են և ցանկացած մարդու կյանքում: Վերաբերմունքդ արտահայտելու համար հեֆիա՛թ հորինի՛ր բարի և չար բառերի մասին: Պահպանի՛ր հեֆիաթի գրություն բոլոր կանոնները **(10 միավոր):**

